№ 104 ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 21

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՅԻՍԻ 21 № 104

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

Ներկայ մայիսի լոյս 18-ի գիշերը, իր Ներսէսապատ կալուածում, յանկարծակի վախճանվեց

Երդուեալ հաւատարմատար

ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ ԱԹԱԲԷԳԵԱՆ

որի մասին խորին վշտով յայտնում են հանգուցեալի զաւակները ազգականներին և ծանօթներին։ Թաղումը տեղի կունենայ Էջմիածնում կիրակի, մայիսի 23-ին։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն հասարակութեան, որ Բարձրագոյն թոյլատրութեամբ ինքը բաց է արել ստորագրութիւն նուէրներ հաւաքելու համար, որպէս զի Թիֆլիս քաղաքում արձան կանգնեցնէ հանգուցեալ Մեծ Իշխանուհի Օլգա Ֆեոդորովնայինն։ 1—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թատրոնական գործ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միտքը կեանքի մէջ. Կիրակնօրեայ դպրոցը Բագուում. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Քաղաքական աշխարհի կարևոր դէպքերը. Նամակ Բէլգիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

—

Թատրոնական ներկայացումների կազմակերպութիւնը առաջիկայ ձմեռվայ ընթացքում տարբեր կը լինի անցեալ տարվանից։ Թիֆլիսի դրամատիքական ընկերութիւնը պէտք է պահէ մշտական խումբ ոչ թէ սեպտեմբեր ամսից, այլ Նոր-տարուց յետոյ։ Իսկ մինչև Նոր-տարին պէտք է կազմակերպվեն սիրողների մասնակցութեամբ չորս կամ վեց ներկայացումներ ընկերութեան դրամական միջոցները աւելացնելու նպատակով։

Մշտական դերասանական խումբը մինչև Նոր-տարին պէտք է գործէ Բագուում։ որտեղ անցեալ տարի ամենևին տեղի չունեցան կանոնաւոր կազմակերպված ներկայացումներ։ Բագուցիները, որոնք չորս հինգ տարի առաջ այնքան նպաստեցին մշտական թատրոնական ներկայացումների կազմակերպութեան գործին, վերջին երկու երեք տարիներում ոչ միայն ցոյց չեն տալիս նոր եռանդ դէպի բեմի աւելի լայն զարգացման հարցերը, այլ և անկարող հանդիսացան պահպանել և այն, ինչ որ գոյութիւն ունէր առաջ։ Այժմ բագուցիները պէտք է նորից սթափվեն, նորից կենդանութեան նշոյլ ցոյց տան և նորից գըլուխ կանգնեն մի գործի, որի անհրաժեշտութեան մասին մի ժամանակ ամենից աւելի բարձրաձայն աղաղակում էին իրանք Բագուի գործողները։ Եթէ նրանք կարօտ էին մի առժամանակեայ հանգըստութեան և դադարի, այժմ պարտաւոր են աւելի մեծ ոյժով և եռանդով մօտենալ գործին, մանաւանդ որ այժմ նրանք մենակ չեն և թատրոն պահելու հոգսը բաժանված է Թիֆլիսցիների և նրանց մէջ։

Թիֆլիսում ներկայացումները պէտք է տեղի ունենան, նախկին տարիների օրինակով, Արտիստական ընկերութեան թատրոնում՝ մինչև մեծ-պաս 325, իսկ պասի ընթացքում 225 ռուբլի գիշերավարձով։ Դրամատիական ընկերութիւնը յոյս ունի, որ նրա նախահաշիւը աւելի քիչ դեֆիցիտով վերջանայ, քան անցեալ տարի, այն է 3500 ռուբլիով, մի գումար, որ նա պէտք է ծածկէ ընկերութեան միւս միջոցներից։

Մենք կարևոր ենք համարում նորից շեշտել մի կարևոր կէտի վրա, որից մեծապէս կախված է ապագայ ներկայացումների աջողութիւնը։ Դա բեպերտուարի ճոխացման հարցն է։ Պէտք է ամեն ջանք գործ դնել, որ պատրաստ լինեն բաւական թւով նոր պիեսներ թէ հետաքրքրութիւն շարժելու հասարակութեան մէջ և թէ թատրոնական գործի զարգացումը տարէցտարի կանոնաւոր առաջ տանելու նպատակով։

Հասարակութեան անտարբերութիւնը կամ ոչ բաւականաչափ ջերմ վերաբերմունքը դէպի բեմը մենք մտադիր չենք բացատրելու բեպերտուարի պակասութեամբ, բայց մենք չէինք ցանկանայ, որ հասարակութիւնը պատրուակ բռնէր բեպերտուարի աղքատութիւնը, կամ դերասանների տեխնիքական պակասութիւնները։ Թող դրամատիական ընկերութիւնը լիակատար կերպով իրագործէ իր վրա վերցրած յանձնարարութիւնը և ազատ լինի հիմնաւոր մեղադրանքներից, որպէս զի մենք համարձակ կերպով դիմենք հասարակութեանը և կշտամբենք նրան՝ հարուածելով նրա անտարբերութիւնը դէպի թատրոնական գործի զարգացումը մեր մէջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՏՔԸ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

IV

Ո՞վ է մեղաւորը։ Միանգամից պատասխանել այս հարցին, ցոյց տալով այս կամ անձնաւորութիւնը, հաղիւ թէ ճիշդ լինի։ Ընդհանուր անկարգութիւն, ընդհանուր կազմալուծութիւն էք նկատում ամբողջ գործի մէջ։ Մեղադրվողը մի մարդ է միայն,—քարտուղարը։ Բայց մի՞թէ քարտուղարից դուրս ամեն ինչ կանոնաւոր ու գեղեցիկ է ընկերութեան մէջ։ Ի՞նչը կարող ենք հաւանել։ Արդեօք ամբողջ վարչութի՞ւնը, որ այնպիսի ծայրայեղ անհոգութիւն է ցոյց տուել։ Արդեօք քննիչ մասնաժողովը, թէ նոյն իսկ 20—25 հոգուց բաղկացած ընդհանուր ժողովը...

Ամեն ինչ ցոյց է տալիս ապշեցնող պարզութեամբ, որ մարդիկ ակամայ են գեղեցիկ մտքի օրգան դարձել, որ ոչ ոք պատրաստութիւն, եռանդ, անկեղծութիւն չէ ժողովել իր վրա վերցրած գործի մէջ։ Իսկ ուր չը կայ գիտակցութիւն, սրտացաւութիւն, այնտեղ ամենագեղեցիկ միտքն անգամ, ամենալաւ պայմանների մէջ դրված հիմնարկութիւնն անգամ պէտք է ընկնէ, մի զզուելի ծաղրանկարի կերպարանք ստանայ։

Հաւատանք մի բօպէ, թէ պ. Օհանջանեանի վրա բարդած մեղադրանքները ճիշդ են։ Հաւատանք, որ նա ամենակարող մարդ էր, դիկտատոր էր։ Այն ժամանակ հարց պիտի տանք՝ իսկ ինչացու էր վարչութիւնը, ի՞նչ էին անում նրա նախագահը, նրա անդամները։ Կարելի՞ է մի՞թէ, որ մի կոլեգիալ հիմնարկութեան մէջ մէկը այդքան ոյժ ու նշանակութիւն ստանայ, այդքան ապօրինութիւններ կատարէ։ Կարելի է, այո՛, եթէ հիմնարկութեան միւս անդամները ձեի համար, մի յայտնի ժամանակ, հաւաքվեն, մի քանի խօսք ասեն ու հեռանան՝ մէկ էլ մի ուրիշ անգամ այդպէս հաւաքվելու համար։

Այսպիսի հիմնարկութիւններից ամեն ինչ կարելի է սպասել—ինտրիգներ, մեռելութիւն, զզուելի անկարգութիւն։ Եւ Բագուի ընկերութիւնը ցոյց տուեց իրան այդ դրութեան մէջ։ Մեղադրվողների նստարանի վրա պիտի հանդէս գար ամբողջ կազմակերպութիւնը, ամբողջ սիստեմը. պիտի դատապարտվէր անսրտութիւնը, ձեականութիւնը, մի խօսքով՝ մեռած հասարակութեան այն պատկերը, որ այդպիսի անկարգութիւններ է ծնում։

Կանանց պաշտպանութեան Բագուի ընկերութիւնը ինքն իրան խայտառակեց այդ ընդհանուր ժողովներում։ Գործը չափազանց նուրբ է, չափազանց գաղափարական. և նրան սատիկ արատաւորել կարող է պարզ անհոգութիւնն անգամ, ՀՐ մեռց այնպիսի ահաւոր չարիքը, ինչպիսին է անբարեխղճութիւնը։ Երբ կայ այս չարիքը, այս կամ այն անհատը նշանակութիւն ունենալ չէ կարող։ Վաղը նրա տեղ մի ուրիշը լոյս կընկնէ, մի ուրիշ գործով յայտնի կը դառնայ։

Ընկերութիւնը արատաւորել է իր անունը։ Եւ արատաւորողը ամենից շատ, ամենից առաջ անբարեխղճութիւնն է։ Քանի կայ նա, արատը սրբված չի լինի։

Գանք այժմ պ. Օհանջանեանին։ Նա ունի միայն մի «յանցանք»—սիրել է ընկերութեան հովանաւորութիւնը վայելող աղջկան, կամեցել է նրան ազատել կեանքի վատ պայմաններից, ամուսնանալ նրա հետ։

Յանցանք է դա։ Ո՛չ, յանցանք չէ։ Ո՞վ և ի՞նչպէս կարող է դատապարտել մի մարդու, որ սիրում է, որ պատրաստ է իր սիրոյ առարկայի հետ վարվել մի ազնիւ և պատուաւոր մարդու բոլոր պարտաւորութիւններով։ Այս մասին հարց լինել չէ կարող։ Աւելի լուրջ հարցն այն է՝ ունէ՞ր պ. Օհանջանեանը իրաւունք այդպէս վարվելու Կ-վայի հետ։ Նա ինքն ասում է, թէ ընկերութեան անդամ և քարտուղար լինելուց առաջ նա մարդ է, իսկ մարդը ունի իր անկողոպտելի իրաւունքները։ Այս էլ շատ ճիշդ է։ Բայց արդեօք այստեղ մարդկային իրաւունքը չէ՞ ընդհարվում պ. Օհանջանեանի ունեցած պաշտօնի հետ։

Ընդհարվում է, և պ. Օհանջանեանը չը պիտի ժոռանար այս։ Այն բօպէից, երբ նա զգաց, որ անտարբեր չէ դէպի գեղեցիկ աղջիկը, պիտի հրաժարվէր իր պաշտօնից և սկսէր գործել իբրև մասնաւոր մարդ, իբրև կողմնակի անձնաւորութիւն։ Նա չէ արել այդ, ուզեցել է ազդել և համոզել իբրև վարչութեան քարտուղար, իբրև մի մարդ, որի ձեռքում իշխանութիւն կայ,—և ահա այստեղ նա թոյլ է տուել, որ իր դէմ բարձրանայ ինտրիգների փոթորիկը։—Երբ բարեգործական մի հասատատութեան մէջ մի որոշ չափով աշառութիւն է մտնում պաշտպանվածներից մէկի վերաբերմամբ, հաստատվում է ֆաւորիտիզմ այն չափով, որ նա նկատելի է լինում միւս պաշտպանվածների համար, այդտեղ արդէն բարոյական հիմքերը պէտք է խախտվեն։

Պ. Օհանջանեանը պիտի հասկանար, որ ինքը չէ կարող անտարբել լինել Կ—վայի վերաբերմամբ, չէ կարող նրան նայել. այնպէս, ինչպէս նայում է միացածներին։ Այդտեղ նրա ստանձնած հասարակական պաշտօնը բողոքում էր նրա անհատական զգացմունքների դէմ։ Երկուսը միասին ապրել չէին կարող, պէտք էր զիջել մէկն ու մէկին։ Պ. Օհանջանեան չը զիջեց.—դա մեծ սխալ էր նրա կողմից։

Ահա այդ է միայն մնում նրա դէմ իբրև «յանցանք»։ Այդ սխալն էր, որ ընդհանուր ժողովը իր որոշման մէջ անուանեց «թեթեւամիտ վարմունք»։ Մեր կարծիքով, սա մի աջող ձևակերպութիւն է, որ լիովին համապատասխանում է պ. Օհանջանեանի գործունէութեան։ Թեթեւամտութիւնն է, որ չէ թոյլ տուել պ. Օհանջանեանին լաւ տեսնելու այն միջավայրը, ուր նա գործում է։ Մենք ծանօթ չենք Բագուի կանանց ապաստանարանի հետ. ՀՐ գիտէ, գուցէ այդ «թեթեւամտութիւնը» շատ անմեղ մի բան է՝ համեմատած այն կարգերի հետ, որոնք գոյութիւն ունեն այնտեղ։ Բայց մենք իրականութիւնը չունենք ի նկատի, այլ այն, ինչ պիտի ներկայացնէ ընկած կանանց բարձրացնելու սուրբ և նուիրական գործը։

Ո՞րքան լաւ կը լինէր պ. Օհանջանեանի համար, եթէ Կ—վան հէնց առաջին անգամից համաձայնված լինէր նրա կինը դառնալ։ Բայց նա չէ համաձայնվել, և պ. Օհանջանեանը ստիպված է եղել սիրաշահել նրան, գրասենեակում պաշտօն տալ, թրև գալ նրա ետևից, ընծաների միջոցով ազդել և այլն։

Այս բոլորը, ճիշդ որ, թեթեւամտութիւն է. պ. Օհանջանեանը մոռացել է, որ ինքը վարչութեան անդամ է և քարտուղար։

Ամբողջ յանցանքը այս է։ Եւ պ. Օհանջանեանը, պէտք է խոստովանել, չափազանց մեծ պատիժ կրեց իր այդ յանցանքի համար։ Բարակ հիւսած ինտրիգան լաւ կարողացաւ օգտվել նրա թեթեւամտութիւնից։

Լ.

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԴՊՐՈՑԸ ԲԱԳԻՈՒՄ

(Նամակ Բագուից)

—

Ինչպէս անցեալներում, այս տարի էլ, շնորհիւ մեր ուսուցիչների անտարբեր վերաբերմունքի, ստիպված եղան արձակուրդները շուտ տալու։ Ներկայումս ծրագրի մէջ մտնում են հետևեալ առարկաները՝ ռուսերէն, թուաբանութիւն, հայոց լեզու, նկարչութիւն, գծագրութիւն և երկրաչափութիւն։ Յաճախողների թիւը սկզբում հասնում էր մօտ 450 հոգու, բայց վերջերս մնացել էր ոչ աւելի քան 100—120 հոգի։

Տեսնենք, թէ ինչն է այս աստիճանաբար նուազման պատճառը և թէ ի՞նչ պէտք է անել նրա առաջն առնելու համար։

Յաճախողների մեծամասնութիւնը կազմում են հայեր, թուրքեր և ռուսներ, շատ քիչ թւով հրէաներ, 10—40 տարեկան հասակի, գլխաւորապէս գործակատար և արհեստաւոր դասակարգից։ Զարչարվելով ամբողջ շաբաթ, նրանք չէին զլանում զոհելու միակ իրանց հանգստի օրը և, ուսման անդիմադրելի ծարաւը զգալով, շտապում էին կիրակնօրեայ դպրոցը, փափագելով գէթ գրել-կարդալ սովորել։

Շատ անգամ առիթ եմ ունեցել լսելու յաճախողների հետևեալ բնորոշ դիալոգը։

—«Ես վճռել եմ, ինչ ուզում է լինի, պէտք է անպատճառ գրել-կարդալ սովորեմ, ամեն մի բօպէ զգում եմ դրա պահանջը։»

—Ես էլ, տեսնում ես, նստում եմ 10 տարեկան երեխաների կողքին, չը նայած ինքս դրանցից աւելի մեծ երեխաներ ունեմ։ Շատ անգամ եմ գրքերը ձեռքս վերցրել, որ իմանում, թէ ի՞նչ է լաւը և ինչն է վատը աշխարհիս երեսին, բայց չիմանալով գրագիտութիւնը՝ նայել, նայել եմ... և յուսահատված գիրքը ձեռքիցս վայր գցել. թէև սկզբում շատ էի քաշվում, բայց վերջը մի կողմը դրի ամօթը և սկսեցի յաճախել դպրոցը։

Պէտք է տեսնել, թէ ինչ ուրախութիւն և ոգևորութիւն է փայլում այդ «հասակաւոր մանուկների» դէմքերին, երբ նրանք այբուբենը սովորելուց յետոյ, առաջին անգամ, տառերը միացնելով, ամբողջապէս քրտինքի մէջ կորած, գրի էին անցնում իրանց անունը և ազգանունը (նրանք այդ բօպէին երևակայում էին իրանց «եօթերորդ երկնքում»), կամ թէ դասի վերջը ինչպէս սրտանց անվերջ շնորհակալութիւն էին յայտնում ուսուցչին։ Այս ամենը պարզ ցոյց է տալիս, թէ որքան բուռն է ուսման ցանկութիւնը այստեղի արհեստաւոր և գործակատար դասակարգի մէջ։

Արդ, ի՞նչն է պատճառը, որ սովորելու այսքան բուռն ցանկութիւն ունեցող յաճախողների թիւը աստիճաբար պակասում էր։

Նախ՝ դասատուները (մեծ մասամբ) միջին և բարձր դասարանների աշակերտներ և աշակերտուհիներ են. դրանցից շատերը յանձն են առնում դասախօսելու ոչ թէ գործի անհրաժեշտութեան և մատուցած օգտի տեսակէտը ի նկատի ունենալով, այլ միայն «դասատու» պատուաւոր տիտղոսը ստանալու համար. ապացոյց, որ դասախօսութեան (26 կիրակի) ընթացքում մի և նոյն առարկայի հա-

մաս փոխվում են 5—6 դասատուներ, որոնք սկզբում կէս-կէս ժամով ուշանում էին դասերին, իսկ վերջերումս շարունակ բացակայում էին։ Ի հարկէ այս հանգամանքը նպաստում էր յաճախողների թիւի պակասելուն։

Երկրորդ, աւելի յուսահատեցնող տպաւորութիւն էր թողնում և այն հանգամանքը, որ ամեն մի դասատու սկսում էր աւանդել իր սիստեմով, այնպէս որ խեղճ աշակերտը նոր ուսուցչի շնորհիւ մի բանը ստիպված էր լինում մի քանի անգամ կրկնելու, որը վերջապէս ձանձրոյթ էր պատճառում նրան և սառցնում դասերից։ Ընդհանրապէս դասախօսութիւնները կիրակնօրեայ դպրոցում կրում էին վայրիվերոյ և պատահական կերպարանք և միայն դրան կարելի է վերագրել յաճախողների հետզհետէ պակասումը։ Սակայն գործը արժանի է ամենայն ուշադրութեան և լուրջ վերաբերմունքի։ Մեր խնամարհ կարծիքով հարկաւոր է հրաւիրել աւելի հմուտ դասախօսներ, որոնք պէտք է անպայման ծանօթ լինեն տեղական լեզուներին. իսկ եթէ դժուար լինի գտնել այդպիսի դասատուներ, պէտք է նրանց օգնականներ տալ, որոնք կարողանային յաճախողներին ծանօթ լեզուով բացատրել ուսուցչի միտքը, այլապէս ուսուցչի ժաքուր գրականական լեզուով տուած բացատրութիւնները (առհասարակ մի բան բացատրելիս կարելոյն չափ աշխատում են գրականական լեզուով բացատրել), հակառակ լսողների խիստ ցանկութեան և նրանց գործ դրած ջանքերին, բոլորովին անհասկանալի են մնում նրանց համար։

Ցանկալի է, որ դպրոցի վարչութիւնը աչքի առաջ ունենար այդ հանգամանքը և սեպտեմբերից հրաւիրէր գործին աւելի հմուտ և փորձված անձնաւորութիւններ։ (Ինչպէս ասում են, Օդեսայում, Խարկովում և շատ ուրիշ քաղաքներում կիրակնօրեայ դպրոցներում ուսուցիչները յայտնի մանկավարժներ և բարձր կրթութեան տէր մարդիկ են)։ Աչքի առաջ ունենալով, որ Բագուում կան մեծ թիւով թէ պաշտօնաթող ուսուցիչներ և թէ այդ գործին հմուտ և կրթված մարդիկ, յոյս ունենք, որ կը գտնվեն նրանց մէջ անհատներ, որոնք յանձն կառնեն դասախօսել և գէթ մի երկու ժամով նպաստել ժողովրդական լուսաւորութեան օգտակար գործին, որով նրանք թէ կատարած կը լինեն իրանց բարոյական պարտականութիւնը և թէ պատճառ կը դառնան հարիւրաւոր մարդկանց խաւարից լոյս հանելուն։

Յուսանք, ուրեմն։

Ալ. Բարութչեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներքին գործերի մինիստրութեան կենտրոնական վիճակագրական կոմիտէը դիտաւորութիւն ունի հաւաքելու տեղեկութիւններ Կովկասի բոլոր նահանգներում հացի ցանքսի տարածութեան և պտղաբերութեան մասին։ Այդ պատճառով կոմիտէը կազմել և տպագրել է տուել տեղական լեզուներով բլանկներ, որպէս զի ուղարկէ ամեն կողմ պահանջված տեղեկութիւնները միօրինակ գրվելու համար։

—

Բագուի լրագիրները հաղորդում են, որ «Եղբ. Նօբէլ» նաւթարդիւնաբերական ֆիրման կովկասեան հանքային ջրերում գտել է մի հողաբաժին՝ մարդասիրական նպատակով։ Այդ հողաբաժնի վրա շինել է տալու մի քանի բնակարաններ, որպէս զի իր ֆիրմայում աշխատողներից նրանց, որոնք կարիք են զգում հանգստութեան և կազդուրվելու, ուղարկէ այն տեղ որոշ ժամանակով։ Արդեօք տեղական միւս հարուստ ֆիրմաներն էլ պէտք է հետեւին Նոբէլ Եղբայրների այդ գեղեցիկ օրինակին։

—

„Русь“ լրագիրը հաղորդում է, որ նահանգապետներին իրաւունք է տուած թոյլատրել օտար քրիստոնէական դաւանութիւններից մէկին պատկանող անձերին անցնել միւս դաւանութեան, նոյնպէս և մահմեդականներին և հրէաներին թոյլատրել ընդունելու պետութեան մէջ ճանաչված որ և է քրիստոնէական դաւանութիւն։

—

Բագուի քաղաքային վարչութեան վիճակագրական բաժանմունքը հաւաքել է քաղաքի դպրոցական գործին վերաբերվող բոլոր թւերը, որոնցից մի քանիսը մենք առաջ ենք բերում, քաղելով „Каспій“ լրագրից։ Ներկայումս Բագուի մէջ պետական դպրոցական բոլոր հաստատութիւնների թիւն է 11, որոնց մէջ սովորում են 4550 երկու սեռի երեխաներ, հոգևոր վարչութեան դպրոցների թիւն է 4 հատ 472 երկու սեռի սաներով. քաղաքն ունի 27 ուսումնարան՝ 4,332 աշակերտ-աշակերտուհիներով. մասնաւոր դպրոցներն են 25 հատ 1,480 սաներով և նաւթարդիւնաբերական խորհրդի տարրական դպրոցների թիւն է 71, որոնց մէջ ուսանում են 11,043 երկսեռ սաներ. ընդամենը—138 ստորին և միջնակարգ դպրոցներ՝ 21,877 երկսեռ սաներով։

—

Պետական գոյութիւն ունեցող օրէնքն արգելում է հրէաներին ապրել սահմաններից 50 վերստ դէպի երկրի ներսը եղած շերտի վրա. նրանք պէտք է ապրեն 50 վերստից աւելի հեռու սահմաններից։ „Прав. Вѣст.“-ում տպված է այդ առիթով հետեւեալը. «Ներքին գործերի մինիստրը առաջարկեց Պետական Խորհրդին փոխել հրէաներին սահմաններից 50 վերստ ներս եղած շերտի վրա հաստատվելն ու ընակվելը արգելող օրէնքը»։

—

«Շարքի Ռուս» թերթը թերթի խմբագիրը դիմել է մահմեդական սիւնիների և շիաների հոգևոր վարչութեանը և առաջարկել հետեւեալ բաւական խորամանկ պայմանը. լրագիրը ձրի կը տպագրէ հոգևոր վարչութեանը վերաբերեան բոլոր թղթերն ու յայտարարութիւնները, միայն հոգևոր վարչութիւնը իր թերթի ստանալը պէտք է պարտաւորական դարձնէ բոլոր իր իրաւասութեան տակ գտնված հոգևորականների համար։ Հոգևոր վարչութիւնները, քննելով «Շարքի Ռուս»-ի խմբագրի, առաջարկը, որոշեցին յանձնարարել այդ լրագիրը դպրոցներին և ծխական մօլլաներին։

—

Վարշավայի տեխնիկների ընկերութիւնը հաւաքել է վիճակագրական տեղեկութիւններ Պրիվիսլինսկի երկրի արդիւնաբերական օրացոյց-տեղեկատու կազմելու համար։ „Варш. Днев.“ լրագիրը հաղորդում է, որ այդ հաւաքած տեղեկութիւնների համաձայն, բոլոր այդ երկրի արդիւնաբերական կապիտալն է 1,771 միլիոն բուբլի, բոլոր գործարանների տարեկան արդիւնագործութիւնն է 637 միլիոն լուբլի աշխատող բանւորների թիւն է 365,000 մարդ։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «6—7 օրվայ տաք եղանակներին կրկին յաջորդեցին ցուրտ և ձիւնախառն անձրևային եղանակները։ Երէկ, մայիսի 16-ին, սաստիկ ցուրտ էր. տեղում էր ձիւնախառն անձրև, որ տեւեց մինչև ցերեկվայ ժամը 2ը։ Այստեղ կատարեալ ձմեռային եղանակ է»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մի շաբաթից ի վեր Երևանումն է տ. Սիրանոյշը իր խմբով և տալիս է ներկայացումներ։ Խմբի մէջ է նաև գերասան Պետրոսեանը։ Այստեղ սաստիկ խոնաւ եղանակներ են անում, հազարեա օր չէ անցնում, որ անձրև չը գայ, բուսականութիւնը ժամանակ չէ գտել աճող կերպով աճելու»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի այն գիւղերում, որտեղ պարապում են այգեպանութեամբ, անցեալ տարի անձրևներից փչացան խաղողի բոլոր այգիները, և գիւղացիները զուրկ մնացին բերքից։ Եթէ բժշկէին այգիները ծծումբի ու պղնձէ արջասպի միջոցով, ինչպէս անում են այդ գանձակեցիներից շատերը ու բոլոր գերմանացի գիւղացիները, այդ չէր պատահի։ Այս տարի էլ, որը աւելի անձրևային է երևում, նոյնը կը կրկնվի անշուշտ, եթէ մեր գիւղացիները շարունակեն ծծրակները քորելով նայել երկնքին՝ այնտեղից ողորմութիւն, փրկութիւն ստանալու յուսով, եթէ շարունակեն չը հաւատալ բժշկման ու իրանց բանիմաց հարևան գերմանացիների պէս խելացի միջոցներ չը ձեռնարկեն իրանց այգիների բերքը կորստից փրկելու։ Գիւղացիներից շատերը գործին ծանօթ են, քանի որ բանում են գերմանացիների և գանձակեցիների այգիներում. հարկաւոր է միայն ցանկութիւն, հեռատեսութիւն ու խելացիութիւն։»

—

ԲՕԼՆԻՍ-ԽԱԶՆԼՈՒ գիւղից մեզ գրում են. «Արդէն գարունը վերջանալուն մօտ է, բայց մեր գիւղը դեռ ևս գարնան հոտն անգամ չէ զգացել. անձրև, շարունակ անձրև. միմիայն բուսականութիւնից ենք իմանում, որ գարուն է։ Ամբողջ երեք ամիս է, ինչ որ շարունակ, կարճ ընդհատումներով, անձրևում է։ Ամբողջ գիւղը ծածկված է նօսր ցեխով. շինութիւնների մեծ մասի մէջ կաթիլուց մինչև սրունքները հասնող ցեխ է գոյացել. խեղճ գիւղացիք ստիպված են ժամանակաւորապէս տեղափոխվել հարևանի տանիքաւոր և կամ համեմատաբար աւելի ցամաք տները։ Մի քանի տների պատեր փլվեցին, բայց բարեբաղդաբար մարդկային զոհ չեղաւ։ Անձրևների տարօրինակ առատութիւնից բուսականութիւնը դեղնել է. Բօլնիսի գետը այն աստիճան մեծացել էր, որ խլեց կամուրջը, հասաւ մինչև այգիները։ Իսկ մօտակայ գերմանական գաղութի մօտով հոսող Ճապալա գետը մօտ կէս վերստ տեղ ողողել է գերմանացիների այգիները և աւազով ու քարով լցրել։ Վերջին օրերս անտանելի ցրտեր է անում. գիւղացիք նեղված ցրտից, ստիպված էին նորից վառարանները սարքել։ Այս հինգ տարի է խեղճերը մնում են դատարկաձեռն. ամբողջ տարին այգիներում աշխատում են, արիւն քրտինք թափում, իսկ վերջը զանազան պատուհասներից ամբողջ աշխատանքը ջուր է դառնում, կամ կարկուտ է գալիս, կամ «մոխիր» անուանված թոզն է փչացնում, կամ հիւանդութիւնից անժամանակ տերևն է չորանում, իսկ այս տարի, երբ այդ բոլորի դէմ (բացի կարկուտը) կուռելու միջոցները իւրացրին, դուրս եկաւ մի նոր ցաւ ու պատուհաս. դա «պղոճ» և «պապիրոս շինող» անուանված միջատ—գազաններն են։ Առաջինը որթի պտուկներն է ուտում և ամբողջովին չորացնում, իսկ երկրորդն էլ որթի տերևներին է ծիախոտի ձև տալիս և մէջը ձու ածում։ Բայց այդ միջատները այնքան ահարկու չեն գիւղացու համար, որքան այս ժամանակվայ ցուրտը. գիւղացիք սարսափով ու երկիւղով սպասում են բուսականութեան ցուրտ տանելուն և ահա այն ժամանակ մեր գիւղում կը լինի կատարեալ սով. այո, սով, բառիս բուն նշանակութեամբ, և այն ժամանակ թող խեղճ գիւղացին վայ տայ իր գլխին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Եապօնական դիպլոմատների գրագրութիւնը։ Եապօնական կառավարութիւնը, կամենալով արդարացնել իր վարմունքը և հերքել իր վրա բարդված մեղադրանքները, նորից ուղարկել է եւրոպական պետութիւններին թարգմանութիւնը այն 51 հեռագիրների, որ եապօնական արտաքին գործերի մինիստր Կոմուրան փոխանակել է Պետերբուրգի եապօնական դեսպան Կուրինոի հետ, պատերազմից 6 ամիս առաջ։ Առաջին հեռագրի թիւն է «1903 թ. յուլիսի 28-ը», իսկ վերջինների թիւն է» 1904 թ. փետրվարի 4-ը»։

Այդ հեռագիրները տպել է Վիէննայի «Neue Freie Presse» լրագիրը. մենք առաջ կը բերենք մի քանի հետաքրքրականները։

1903 թ. օգոստոսի 3-ին, բարոն Կոմուրան հաղորդում է պ. Կուրինոյին, թէ Եապօնիան այս տեսակ կոմպրոմիս է առաջարկում. 1) Փոխադարձ պարտաւորութիւն՝ յարգել Չինաստանի և Կորէայի անկախութիւնը և հողային անձեռնմխելիութիւնը և պահպանել բոլոր ազգերի հաւասար իրաւունքի պրինցիպը՝ այդ երկիրներում առևտրով և արդիւնաբերութեամբ պարապելու։ 2) Փոխադարձ ճանաչումն այն բանի, որ եապօնական շահերը գերակշիռ են Կորէայում, իսկ ռուսական շահերը Մանջուրիայում և կապված են երկաթուղային ձեռնարկութիւնների հետ. ճանաչել, որ Եապօնիան Կորէայում և Ռուսաստանը Մանջուրիայում իրաւունք ունեն ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են դատվել, ի նկատի ունենալով այդ պետութիւնների վերոյիշեալ երկիրներում ունեցած շահերը։ 3) Փոխադարձ երաշխաւորութիւն՝ խոչնդոտ չը լինել Եապօնիայի առևտրական և արդիւնաբերական գործունէութեան Կորէայում և Ռուսաստանինը՝ Մանջուրիայում, որչափ այդ գործունէութիւնը համաձայն կը լինի 1 յօդ. կարգադրութիւններին։ Պարտաւորութիւն Ռուսաստանի կողմից խոչնդոտ չը լինել կօրէական երկաթուղու տարածման մինչև Մանջուրիայի հարաւային սահմանը և այդ երկաթուղու միացման արևելեան-չինական գծի և Շանխայ-Գուան-Նիւ-Զժուան-Լինիէն գծի հետ։ 4) Փոխադարձ համաձայնութիւն, որ անհրաժեշտութեան դէպքում Եապօնիան կարողանայ զօրք ուղարկել Կորէա, իսկ Ռուսաստանը՝ Մանջուրիա, շահերի պաշտպանութեան և ապատամբութիւնների զսպման համար։ 5) Ռուսաստանը ճանաչում է Եապօնիայի համար իրաւունք՝ Կորէայի պետական մեքենան կարգաւորելու և բէֆորմեր մտցնելու նպատակով, օգնելու վերջինին խորհրդով, ինչպէս և զօրքերով։»

Այս կոմպրոմիսը Ռուսաստանը չընդունեց։ 1903 թ. դեկտեմբերի 12-ին բարոն Կոմուրան հաղորդում է պ. Կուրինոյին, թէ ռուսաց դեսպանը Տօկիօում, բարոն Ռոզէն, յանձնեց իրան Ռուսաստանի հետեւեալ առաջարկութիւնը. 1) Փոխադարձ պարտաւորութիւն՝ յարգել Կորէայի անկախութիւնը և հողային անձեռնմխելիութիւնը։ 2) Ռուսաստանը ճանաչում է եապօնական շահերի գերակշռութիւնը Կորէայում և Եապօնիայի իրաւունքը օգնել Կորէային խորհուրդներով նրա քաղաքացիական վարչութեան բարւոքման գործում։ 3) Ռուսաստանը պարտաւորվում է չը խափանել Եապօնիայի առևտրական և արդիւնաբերական գործունէութիւնը Կորէայում և ընդդիմադրութիւն ցոյց չը տալ այն միջոցներին, որոնք ուղղված կը լինեն այդ շահերի պաշտպանութեան։ 4) Ռուսաստանը ճանաչում է Եապօնիայի համար իրաւունք ուղարկել Կորէա զօրքեր իր շահերը պաշտպանելու և զսպելու այն ապստամբութիւնները, որոնք կարող են առաջ բերել միջազգային բարդութիւններ։ 5) Փոխադարձ պարտաւորութիւն՝ չօգտվել Կորէայի ոչ մի մասով ռազմագիտական նպատակների համար և չը ձեռնարկել Կորէայի ափերի գծի վրա ոչ մի զինուորական աշխատութիւններ, որոնք կարող կը լինէին ծառայել իբրև սպառնալիք ծովագնացութեան ազատութեան Կորէական նեղուցում։ 6) Փոխադարձ պարտաւորութիւն համարել Կորէայի հիւսիսային գոտին մինչև 30 զուգահեռականը չեզոք գիծ և չը մտցնել զօրք այդ գիծը։ 7) Փոխադարձ երաշխաւորութիւն՝ չընդդիմանալ կօրէական և արևելեան չինական երկաթուղիների միացման, երբ վերջինը կը հասնի Եալու գետին։

Դեկտեմբերի 21-ին բարոն Կոմուրան բողոքում է ռուսական ծրագրի դէմ. «Եապօնիան լսել անգամ չէ կամենում չեզոք գծի մասին»։ Նոյնպէս Տօկիօում «չեն կամենում պարտաւորութիւն տալ չօգտվել Կորէայի որ և է մասից ռազմագիտական նպատակներով»։ Վերջապէս Եապօնիան ցանկանում է իրաւունք ստանալ օգնել Կորէային խորհուրդներով ոչ միայն քաղաքացիական, այլ և զինուորական գործերում։

«Մանաւանդ ցաւալի է մեզ համար, որ Ռուսաստանը ոչինչ չէ ասում Մանջուրիայի մասին»,—գրում էր եապօնական մինիստրը։ 1904 թ. յունվարի 6-ին Ռուսաստանը յայտնեց, որ պնդում է իր առաջարկութիւնների 5-րդ և 6-դ յօդուածների վրա, իսկ Մանջուրիայի վերաբերմամբ, համաձայն է մտցնել հետեւեալ յօդուածը. «Ճանաչումն Եապօնիայի կողմից, որ Մանջուրիան և նրա ծովափնեայ շրջանը գտնվում են եապօնական շահերի շրջանից դուրս և պարտաւորութիւն Ռուսաստանի՝ խոչընդոտ չը լինել ոչ Եապօնիային, ոչ որ և է այլ պետութեան օգտվել Մանջուրիայում այն իրաւունքներով և առանձնաշնորհումներով, որոնք ձեռք են բերել Չինաստանի հետ կնքած դաշնագրերով, բացի գաղթականութիւններ հաստատելու իրաւունքից»։

Եապօնիան դարձեալ չը համաձայնեց. նա աւելի լաւ համարեց պատերազմել։ (Новости)։

Եապօնացիների կռուսները։ Առևտրական-հեռագրական գործակալութեան հեռագրում են Խարբինից, որ իբր մայիսի 11-ին, եապօնացիները, թւով 40,000 հոգի, յարձակումն գործեցին Ցզինչժօուի վրա, կորցրին 10,000 հոգուց աւելի սպանվածներ և զինադադար խնդրեցին սպանվածներին և վիրաւորվածներին ժողովելու համար։ Մայիսի 12 և 13-ին, եապօնացիները նորից 4 յարձակումն գործեցին, որից յետոյ գրաւեցին Ցզինչժօուն։ Նրանց կորուստը մարդկանցով անհագին է։ Երկաթուղին վերականգնված է մինչև Վաֆանդեան կայարանը։ Այս շաբաթ սպասվում են մեծ ճակատամարտեր։ (Рус. Вѣд.)։

Լեաօդունեան թերակղզու պաշարումը։ «Local Anzeiger» թերթի թղթակիցը հեռագրում է Տօկիօից, որ ծովապետ Տոգօն պաշարումն է յայտարարել Լեաօդունեան թերակղզու ամբողջ ծովափը։ Վերջին տեղեկութիւններով, եապօնացիները Պօրտ-Արտուրի նոր ռմբակոծումն սկսեցին, որի մէջ մասնակցում են ութ պատերազմական նաւեր։ Այն լուրը, թէ ռուսները նորից մտել են Նիւչժուան աւելի մեծ զօրքով, այստեղ հաստատվում է։ Եապօնական երրորդ բանակի գլխաւոր ոյժերը ափ են իջել Դագուշանում։ (Т. А.)

Պօրտ-Արտուրի նոր պաշարման մասին։ Լոն-

գոնից, մայիսի 15-ին, հեռագրում են. «Այստեղի եապոնական դեսպանությունը լուրեր է ստացել Տօկիօից, որոնք հաստատում են, թէ ծովապետ Տօգօի էսկադրայի վերջին գործողությունները Պօրտ-Արտուրի դէմ ոչ մի աջողություն չեն ունեցել։ Թէ իրանք եապոնացիները որքան ստիպված են այժմ պահել ամենախիստ զգուշություն Դեղին ծովի վրա, այդ երևում է և Զիֆուի անգլիական թղթակիցների ամեն օր ստացվող հեռագիրներից։ Բոլոր այդ հեռագիրները խօսում են տասնեակ չինական ջնկանների մասին, որոնք ապատ լողում են Պօրտ-Արտուրի, Դալնիի և Շանդունեան ծովափի նաւահանգիստների միջև։ Դրանից զինուորական—ծովային շրջաններում եզրակացնում են, որ եապոնական ծովագնացների գործունէությունը թուլացել է։ (Бирж. Вѣд.)։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

Պատերազմից դուրս քաղաքական աշխարհի նշանաւոր և ուշագրաւ դէպքերն են Ֆրանսիայի և Վատիկանի յարաբերությունների խզումն կամ ֆրանս-պապական ընդհարումը, Տիբէտի անգլիական արշաւանքի նոր ֆազիսը և գերման-աւստրիական-ռուսական մի նոր դաշնակցություն կազմելու ջանքերը։

I

Ամբողջ Ֆրանսիան այսօր յուզված է Վատիկանի բողոքի խնդրով մինչև այն աստիճան, որ նոյն իսկ ռուս-եապոնական պատերազմը առժամանակ մոռացված է երևում։ Մի քանի ժամանակ առաջ, երբ ֆրանսիական հանրապետության նախագահ Լուբէն այցելության գնաց Հռոմ իտալական թագաւորին, լրագիրները իբրև լուր հաղորդեցին, որ Պիոս X պապը բողոք է յայտնել Լուբէի այդ այցելության դէմ։ Սակայն բողոքի բնագիրը կամ բովանդակությունը ոչ ոքի յայտնի չէր և գաղտնի էր պահվում և այդ պատճառով շատերը չէին հաւատում պապի բողոքի գոյության և դիւրաբանում էին ընդունել, թէ նա այդպիսի մի վանգաւոր քայլ կանէ, որովհետև բողոքը այն ձևով, ինչպիսին լրագիրներն էին հաղորդում, ուղղակի մի ծանր վիրաւորանք էր, ուղղված Ֆրանսիայի հասցէին։ Դիպլոմատիան խորհրդաւոր լռություն էր պահում։ Եւ ահա յայտնի գործիչ Ժօրէսին աջողվում է ձեռք բերել Պիոս X պապի բողոքի իսկական պատճէնը և հրատարակել իր նոր «Humanité» թերթի մէջ։

Այդ հրատարակությունը ռումբի ազդեցություն գործեց ամբողջ Ֆրանսիայում և ֆրանսիական կառավարությունը ստիպվեց յետ կանչել Վատիկանի մօտ պաշտօն ունեցող իր դեսպանին, Նիզարին ու խզել, գէթ ժամանակաւորապէս, դիպլոմատիական յարաբերությունները պապական աթոռի հետ։ Եւ արդարև, պապի բողոքը գրված է այնպիսի խիստ, անվայել ոճով, որ նա, ինչպէս նկատում է Ժօրէսը, մի կրկնակի և սանձարձակ անպատուություն է ուղղված Ֆրանսիայի և Իտալիայի հասցէին. պապը այդ բողոքի մէջ ուղղակի ամբաստանում է պետությունների առաջ Լուբէին, հանրապետության նախագահին, իբրև մի յանցաւորի։ Այդ է պատճառը, որ նոյն իսկ հակակառավարչական տարրերը Ֆրանսիայում, կղերականները և առհասարակ ֆրանսիական ներկայ կաբինետի ընդդիմադիր կուսակցությունը սիրա չեն անում որ և է խօսք ասել ի պաշտպանություն Վատիկանի։ Իսկ հանրապետական լրագիրները ուղղակի կատաղած են և հրճվում են միաժամանակ, որ այդ բողոքը առաջ կը բերի կօնկօրդատի քանդումը ու կը լուծվի կաթոլիկ եկեղեցու պետության հետ բաժանման հարցը։

Այդ նկատումներով մենք կարևոր ենք համարում առաջ բերել այստեղ պապական բողոքի թարգմանությունը, որովհետև նա ներկայացնում է մի շատ կարևոր ակտ, որից, ինչպէս ասում է «Gaulois» լրագիրը, պէտք է ծագեն միջազգային կարևոր հետևանքներ։

Ահա այն բողոքը, որ Պիոս X պապի կողմից, կարդինալ Մէրրի Դել Վալը, իբրև պապի արտաքին գործերի պաշտօնեայ, ուղղել է եւրոպական բոլոր պետություններին.

«Վատիկան, 28 ապրիլի 1904. «Ֆրանսիական հանրապետության նախագահ պ. Լուբէի պաշտօնական գալուստը Հռոմ, Վիկտոր-Էմմանուէլ III-ին այցելություն դարձնելու համար, այնպիսի մի արտակարգ ծանր դէպք է, որ ս. աթոռը չէ կարող թողնել անցնել և չը հրաւիրել լուրջ ուշադրությունը այն կառավարության, որի մօտ դուք ներկայացուցիչ էք։

«Հազիւ պէտք կայ յիշեցնել, որ կաթոլիկ տէրությունների պետերը, կապված իբրև կաթոլիկներ յատուկ կապերով եկեղեցու Գերագոյն Հովուապետի հետ, պարտաւոր են վարվել Նրա հետ ամենամեծ յարգանքով, համեմատաբար ոչ-կաթոլիկ պետությունների վեհապետներին, բոլոր այն բաների մէջ, որ վերաբերում է Հովուապետի արժանապատուության, անկախության և անխախտելի իրաւունքներին։ Այդ պարտականությունը, ճանաչված մինչև այժմ և յարգված ամենքից, չը նայելով քաղաքականության, դաշնակցության կամ ազգակցության ամենածանր պատճառներին, պարտադիր էր ֆրանսիական հանրապետության առաջին Պետի համար, մանաւանդ, որ նա, առանց ունենալու այդ յատուկ պատճառներից ոչ մինը, նախագահում է մի ազգի, որ միացած է աւանդական ամենասերտ յարաբերություններով հռոմէական քահանայապետության հետ և վայելում է, ս. աթոռի հետ կընքած երկուստեք պաշնագրով, առանձնաշնորհումներ, ունի կարդինալների ս. կոլլէժում և դրանով նաև համաշխարհային եկեղեցու կառավարության մէջ լայն ներկայացուցչություն. բացի դրանից, մի եզակի շնորհով ժառանգել է կաթոլիկ շահերի պաշտպանությունը Արևելքում։ Հետևաբար, եթէ մի կաթոլիկ ազգի որ և է Պետ մի ծանր վիրաւորանք հասցնէ Վեհապետ Քահանայապետին, գալով յարգանք մատուցանելու Հռոմում, այսինքն այն վայրում, ուր քահանայապետական աթոռն է և մի և նոյն առաքելական պալատում, նրան, որը, հակառակ ամեն իրաւունքի, պահում է իր ձեռքում նրա քաղաքացիական վեհապետությունը և խափանում է հարկաւոր ազատությունը և անկախությունը, այդպիսի վիրաւորանքը պարոն Լուբէի կողմից աւելի շատ մեծ էր։ Եւ եթէ, չը նայելով դրան, պապական նունցիակը Պարիզում յետս չը կոչվեց, դրա դատճառը բացառապէս յատուկ ծանրակշիռ նկատումներ են եղել։ Պ. Դելկասէի արած յայտարարությունը պարլամենտում չէ կարող փոխել դէպքի բնաւորությունը, յայտարարություն, որի համեմատ այդ այցելության իրողությունը որ և է թշնամական դիտաւորություն չէ պարունակում ս. աթոռի դէմ. որովհետև վիրաւորանքը անբաժան է ակտից և մանաւանդ, որ ս. աթոռը չէր զլացել նախազգուշացնել այդ մի և նոյն կառավարությանը։

«Եւ հասարակական կարծիքը, թէ Ֆրանսիայում և թէ Իտալիայում, խլոյն նկատեց այդ այցելության վիրաւորական բնաւորությունը, մի բան, որին հետամուտ էր միտումով իտալական կառավարությունը, որպէս զի դրանով թուլացնէ ս. աթոռի իրաւունքները և անարգէ նրա արժանապատուությունը, իրաւունքներ և արժանապատուություն, որ սա իր գլխաւոր պարտաւորությունն է համարում պաշտպանել և պահպանել ամբողջ աշխարհի կաթոլիկների շահերի համար։ Որպէս զի այդպիսի մի ցաւալի իրողություն չը կարողանայ օրինակ հանդիսանալ, ս. աթոռը ստիպված է տեսնում իրան ամենահանդիսաւոր բողոքներ ներկայացնել նրա դէմ, և ներքոյ ստորագրեալս, կարդինալ-պաշտօնեայ-պետական, նորին սրբության հրամանով, ներկայիս տեղեկացնում եմ Ձերդ Գերազանցության այդ բողոքի մասին, խնդրելով հասցնել Ձեր կառավարության գիտության»։

«Կարդինալ Մէրրի Դէլ Վալ»

ՆԱՄԱԿ ԲԵԼԳԻԱՑԻՑ

Բրիւսսէլ, մայիսի 23/10-ին

Մայիսի 19-ին Բրիւսսէլի Մօնէ կոչված մեծ թատրոնում տեղի ունեցաւ սիմֆոնիական համերգ, ղեկավարությամբ աշխարհահռչակ Վագնէրի աշակերտ պ. Մօտլի։

Համերգը գրաւել էր ահագին բազմություն և շատերը տոմսակ չը գտնելով, սրահները կոտրած վերադառնում էին ձեռնունայն, ափսոսալով, որ առիթ չունեցան լսելու այդ հաստատը և բաւարարություն տալու իրանց էսթէթիքական պահանջներին, քանի որ այսպիսի դէպքեր շատ յաճախ չեն պատահում։

Ծրագիրը ամբողջապէս կազմված էր Բեթհովէնի և Վագնէրի ամենագեղեցիկ կտորներից։ Բեթհովէնին, Վագնէրին և նրա շկոլային (գերմանական) հետևողները տարբերվում են միւսներից, այն է՝ իտալականից և ֆրանսիականից նրանով, որ սրանց արտադրությունները առաջինների նման փոքր և պարզ մէլոդիաներից չեն կազմված, այլ այդ արտադրությունները արտայայտում են մարդու զգացած հոգու տառապանքները և վեհ զգացումները։ Նրանց երևակայությունը միշտ թռչում է դէպի վեր, դէպի գերմարդկային էակները, դէպի աստուածները և յաւերժահարները, մի խօսքով դէպի ամբիծ և մաքուր սէրը։ Բեթհովէնը, խուլ և դժբաղդ լինելով, իր բոլոր արտադրությունների մէջ արտայայտում էր իր հոգու ցաւերը և տառապանքները։

Վագնէրը, թէև ապրում էր մեր աշխարհում, բայց նրա հոգին միշտ սաւառնում, թռչում էր դէպի ուրիշ աշխարհներ, նաև փընտռում էր մի ուրիշ կեանք, մի ուրիշ սէր, մաքուր և անարատ։ Շատերը Վագնէրին չեն սիրում, որովհետև նրան չեն հասկանում, չը տարբերելով հոգու զգացածները արհեստական արտադրություններից։

Ահա ինչն է պատճառը, որ այսօր իտալական և ֆրանսիական երաժշտությունը կորցնում է իր նշանակությունը, տեղի տալով գերմանական երաժշտությանը, չը նայած որ նրանք անցեալում ունեցել են ահագին նշանակություն, որովհետև սրանից 50 տարի առաջ գրեթէ բոլոր երկիրներում նախամեծարություն էր տրվում առաջիններին։ Այդ բանին նպաստող հանգամանքներից մէկն էլ արդի մարդկության ջղայնությունն է, որ մարդիկ փնտռելով հոգու հանգստություն, սիրով ենթարկվում են գերմանական երաժշտության ազդեցությանը։

Զուլթակճեան Դ. Դաւթեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Ալէքսէեվի հեռագիրը Նորին Մեծության մայիսի 18-ից. «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Մեծության կօնտր-ծովապետ Վիտգէֆտից և Գրիգորովիչից ներկայ թւին իմ ստացած հաղորդագրությունները. մինչև մայիսի 15-ը գտնված և պայթեցրված են նաւակայանում եապոնական շատ ականներ։ Ըստ երևոյթին եապոնացիները փոխարինեցին բրանդերները խափանիչ ականներով, որ գնում են նրանք առատական շոգենաւերից»։

Գեներալ-ադիւտանտ Կուրօպատկինի հեռագիրը Նորին Մեծության մայիսի 18-ից. «Ֆինխուանչէնի կողմը ամեն ինչ հանգիստ է։ Եապոնացիները Սիւանը չեն վերցրել։ Նկատվում է, որ եապոնական զօրաբաժինները սկսեցին կամաց կամաց հեռանալ Սէդզիխօ գետի և Սալիդզաուդզայի հովտից արևելեան ուղղությամբ։ Մայիսի 17-ին եապոնական երկու վաշտեր 30 դրագուններով դագուշանեան ճանապարհով առաջ շարժվեցին դէպի Ուուլլասի, աշխատելով մեր պահակակէտի և խուզարկու խմբերի եւեից անցնել ձախ թևից. այդ բանը իր ժամանակին նկատեցին մեր պահապան զինուորները և հրացանաձգության ժամանակ վիրաւորվեց մէկ կօզակ և սպանվեց մէկ ձի։ Եապոնական այն զօրաբաժինը, որի հետ մեր հեծելազօրքը աջող կռիւ ունեցաւ մայիսի 17-ին, կանգ առաւ 4 վերստ հեռաւորությամբ գտնված դիրքի վրա, չը հասած Վաֆանգօու կայարանին և սկսեց ամրացնել նրան։ Սայմացզիի մօտ դէպի Ֆինսոյլինեան լեռանցքը Լեաօեանի ճանապարհի վրա եապոնացիների արշաւանքը այլ ևս չէ նկատվում։»—Գեներալ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին մայիսի 19-ից. Զօրաբաժնի հրամանատարի զեկուցման համեմատ, մայիսի 17-ի կռուի ժամանակ Վաֆանգօուի մօտ եապոնացիները պահեստում ունէին մինչև 3 բատալիօն հետևակ զօրք. մեր կորուստներն են. սպանված են 3 զինուոր և վիրաւորված են 32, սպանված են 17 ձիեր և վիրաւորված են 23. վիրաւորված է հարիւրապետ ֆօն-Մէյէր, միւս վիրաւորված սֆիցէրի ազգանունը դեռ ևս չէ հաղորդված։ Եապոնացիների կորուստները շատ մեծ են.— 13-դ գնդի եապոնական մէկ էսկադրօն ամբողջապէս ջնջված է ձեռնամարտի մէջ, իսկ միւս էսկադրօնը, որ գնում էր օգնություն հասցնելու առաջինին, մեծ կորուստներ կրեց սահմանապահների և կամաւոր կօմանդայի միացած կրակից։ Եապոնացիներից խլված են 19 ձիեր։

20 մայիսի

ՄՕՍԿՎԱ։ Իշխանությունների, սենատօր Տագանցեվի և ուղղիչ հիմնարկությունների ներկայացուցիչների ներկայությամբ Բուկվիշնիկովեան ապաստարանում բացվեց այդ ներկայացուցիչների վեցերորդ համաժողովը։

Կ. ՊՕԼԻՍ։ Ժամանեց աբիսինական մեծ դեսպանությունը, բաղկացած մէկ գեներալից և աբիսինական մի քանի քահանաներից, որոնք Երուսաղէմ էին եկել նէգուսի 12 արկղ նվիրատուներով սուլթանին։ Ռուսաց դեսպանության միջնորդությամբ շնորհիւ, աբիսինական միսսիան անմիջական յարաբերություններ սկսեց տիեզերական պատրիարքի հետ։ Այդ փաստից այն եզրակացությանն են գալիս, որ մերձեցումն է տեղի ունեցել աբիսինական և ուղղափառ եկեղեցիների միջև։

ՄՕՍԿՎԱ։ Ժողովրդական լուսաւորության մինիստրությունը կառավարիչը այցելեց Յէսարեվիչ Նիկոլայի լիցէյը։ Վաղը դեներալ Գլազովին կը ներկայանան համալսարանի պրոֆէսորները և դպրոցների գլխաւորները։

ԲԱԳՈՒ։ Բագուի մի քանի մահմեդական վաճառականներ, ցանկանալով նպաստ հասցնել Հեռաւոր Արևելք ուղևորվող 2-դ դաղրատանեան գնդի զինուորներին, հաւաքեցին 10,825 ռուբլի և յանձնեցին նահանգապետին՝ խնդրելով ուղարկել այդ գումարը գնդի հրամանատար գնդապետ Հուսէյն-խան Նախիչեւանսկուն։

ԲԵՐԼԻՆ։ («Սեփ. թղթակ.»)։ Ի նկատի ունենալով ռուսների յարձակողական շարժումը Կօրէայի հիւսիս-արևելեան մասում, եապոնացիները դիտաւորություն ունեն շուտով հեռանալ Դէնզանից։

ԲԵՐԼԻՆ։ («Վոլֆի գործ.»)։ Այստեղի մամուլի մէջ երևաց մի տեղեկություն, որ իբր թէ Հեռաւոր Արևելքի պատերազմական բեմն ուղարկված գերմանական մի օֆիցէր տանում է գերմանական կայսրի մի ընդարձակ ինքնագիր նամակը Կուրօպատկինի անունով։ «Նօրդդոյտչէ Ցէյտունգ» յայտնում է, որ դա մի խոշոր բաղ է և զգուշացնում էհասարակությանը օտար մամուլի այն տեղեկություններից, որոնք նպատակ ունեն կասկած գցել Գերմանիայի վրա նրա չեզոքության պահպանման վերաբերմամբ։

Կ. ՊՕԼԻՍ։ Աբիսինիական կայսրուհի Տաիտու սեպտեմբերին բազմաթիւ շքախմբով ճանապարհորդություն կը կատարէ Երուսաղէմ ուխտ գնալու համար։ Այդ առաջին անգամն է, որ աբիսինիական արքայական տան անդամը ուղևորվում է Սուրբ Երկիրը։

ՕՐԷՕԼ։ Մցէնսկի գաւառում այրվեց երկդասարանեան Աֆունասիեվեան դպրոցը։ Կրակի բոցերում այրվեցին երկու ուսուցիչներ և ուսուցչի քրոջ դուստրը, 15 տարեկան մի աղջիկ։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Աւստրիական պատգամաւորների ժողովը ընդունեց Բոսնիայի և Հերցեգովինայի բիւդժէտը և ծովային բիւդժէտը որպէս արտակարգ կրէդիտ 75 միլիոն կռոն գումարի։ Բոլոր հռետօրները պաշտպանում էին նաւատորմի զարգացման անհրաժեշտությունը։

20 մայիսի

ՕՐԷՆԲՈՒՐԳ։ Նահանգապետի նախագահությամբ սկսվեցին գիւղացիների վերաբերեալ նոր օրէնսդրությունների նախագիծը փոխելու համար կազմված նահանգական խորհրդակցության նիստերը։ Մասնակցում են 50 մարդ։

ՎՕՐՕՆԷԺ։ Մայիսի 18-ին Հեռաւոր Արևելք ուղևորվեց վօրօնէժեան նահանգական զէմստվօի բժշկական և պաշար մատակարարող խումբը։ Մաղթանքին ներկայ էին նահանգապետը, նահանգական ճայնաւորները, վարչությունը և զէմստվօի ծառայողները։ Վարչության նախագահը իր հրաժեշտի ճառում գնացողներին ասեց. «Տարածության հեռաւորությունը չի խզի մեր կապը ձեզ հետ։ Վօրօնէժի զէմստվօն չի թողնի ձեզ և ձեր ընտանիքը առանց օգնության։» Երեկոյեան մօտ 8 ժամին եկաւ Կուրսկի զէմստվօի խումբը։ Ժամը 10-ին Կուրսկի և Վօրօնէժի զէմստվօների խմբերը

մէկ գնացքով ուղևորվեցին Հեռաւոր Արևելք։

ՏԱՆԺԷՐ։ Եկան ամէրիկական երեք պատերազմական նաւեր։

ՀԱՄԲՈՒՐԳ։ «Ամէն» շոգենաւը փոխադրիչ զօրքերով ճանապարհ ընկաւ դէպի գերմանական կալուածքները հարաւ-արևմտեան Աֆրիկայում։

ԳՄՈՒՆԴԷՆ։ Ժամանեց դանիական թագաւորը։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Աւստրիական պատգաւորների ժողովում ծովային բիւդժէտը քննելու ժամանակ նաւատորմի հրամանատարը յայտնեց, որ խնդրված կրէդիտները կը ծառայեն նաւատորմի շտապ վերակազմութեան համար, որը անհրաժեշտ դարձաւ այն տեսակէտից, որ աւստրիական զրահակիր նաւերը և ականանաւերը չեն համապատասխանում ժամանակակից նաւատորմի պահանջներին։ Նոր կրէդիտները ունեցած ժամանակ հնարաւոր կը լինի մէկ ու կէս տարում կառուցանել զրահակիր նաւերի այնպիսի քանակութիւն, որի համար այլապէս տասն և մէկ տարի կը պահանջվէր։ Նոյնպէս անհրաժեշտ է պաշտպանել նաւահանգիստները, որովհետև ռուս-եապոնական պատերազմը ապացուցեց այն վտանգը, որին կարող են ենթարկվել նաւահանգստում կանգնած և ոչ բաւարար պաշտպանված նաւերը համարձակ թշնամու յանկարծակի յարձակման պատճառով։

ՏԷՊԼԻՑ։ Քաղաքային վարչութեան ներկայացուցիչները ծանուցին ռուսաց զինուորական մինիսարութեան, որ ռուսական վիրաւորված տասը օֆիցէրները կարող են ձրի վաննաներ և ընակարան ունենալ ամբողջ բուժական սեզոնի ընթացքում։

ԽԱՐԿՈՎ։ Սեվաստոպոլ գնացող ճեպընթաց գնացքի մէջ վախճանվեց արիւնհոսութիւնից թոքերում կայսերական թատրոնների դերասանուհի Ելիսաւետա Լեվկէեվա։

ԼՕՆԴՕՆ։ («Ռէյտ. գործ.»)։ Տօկիոից հաղորդում են, որ ցղինչժոյեան կուի մէջ սպանվեց գեներալ Նոգիի որդին։—Անգլո-ֆրանսիական համաձայնութեան վերաբերեալ օրինագծի երկրորդ ընթերցանութեան ժամանակ վիճաբանութիւններին մասնակցեցին շատ հռէտորներ։ Բոլորը հաւանութիւն էին տալիս։

ՍՕՖԻԱ։ Ադրիանոպոլի վիլայէտի փախստականների պատուիրակները, որոնց յանձնարարված է ներկայացնել մեծ պետութիւնների դիպլոմատիական գործակալներին յիշատակագիր՝ ազգաբնակութեան վիճակի բարւոքման մասին Ադրիանոպոլի վիլայէտում, կատարեցին իրանց միսսիան։—Պաշտօնական հաղորդագրութեամբ հերքվում է այն լուրը, որ երբ թէ փախստականները վերադառնալու ժամանակ մեծ անարդարութիւնների են ենթարկվում. ընդհակառակը, թիւրքաց իշխանութիւնները ամէն դիւրութիւններ են տալիս նրանց։ Ապստամբական հրոսակախումբ երևաց Պիչինի մօտ, բայց ցրվեց։ Ունեցած փաստերի համաձայն, հրոսակախումբը կազմված է Սերբիայում։—Սերբիական կառավարութիւնը հերքում է այդ փաստը և խոստանում է սրանից յետոյ էլ խիստ պաշտպանել սահմանը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳԱԲԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Սօլոզով ատամնաբույժ. 9—11 ժ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբուժ. մորթու և վեներական հ.
Գ. Ս. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ ՁԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բ. Ժ. Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ

Կիրակի, մայիսի 23-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
կայանալու է
ԿՕՆՑԷՐՏ
Գ. ԲՕՑԱՃԵԱՆԻ
(տէնօր)
որ աւարտել է Պարիզի կոնսերվատորիայի պրոֆէսսոր A. de Martini-ի օպէրային կուրսերում։
Բարեհաճ մասնակցութեամբ օր. Մարգարիտա Տօյմանի
(Արֆա)
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Սուսանաճեանի խանութում, իսկ կոնցէրտի օրը Թատրոնի կասսայում։ ո. շ. կ. 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հայոց Դրամատիկական Ընկերութիւն
Շաբաթ, մայիսի 22-ին
Հայ դերասանական խումբը, մասնակցութեամբ պ.պ. սիրողների կը ներկայացնէ
„ԷԼԻ ՄԷԿ ԶՈՀ“
կոմէդ. 4 գործ. հեղ. Գ. Սունդուկեանցի։
Մասնակցում են.—Տ.տ. Ս. Զմշկեան, Վարդուհի, Արվանեան. օր. Հայկանուշ։ Պ.պ. Յ. Զըմշկեան, Տէր-Դաւթեան, Տէր-Գրիգորեան, Միրաղեան, Մամիկոնեան և Ղուշչեան։
Սկիզբն է ճիշդ 8½ ժամին երեկոյեան։
Տեղերի գինը 2 ր. մինչև 50 կ.
Տոմսակները վաճառվում են Ժողովարանի ծառայի մօտ։
1—2 ո. շ. Ռէժիսսօր Գ. Տէր-Դաւթեան

Ի. ՄԱՅԷՐԻ
վաճառատունը ստացել է «ՄԱԿՐԱՄԷ» թելը։

Աշակերտ Առևտրական դպրոցի V դասատան կամենում է ունենալ ամառը պարապմունք։ Ուղղնայա փողոց, տուն Տէր-Մկրտչեանցի։ (ո. կ.) 1—2

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
գրախանութում վաճառվում են Կ. Մէլիք-Շահնազարեանի հետևեալ աշխատութիւնները։
Ուղեցոյց գործնական գինեգործութեան 60 կ.
Փշրանք I գրքոյկ . . . 15 »
Ծխախոտ և իր վնասները. . . 10 »
Տնգլբաղ և Զուռնա Տմբլա II գիրք. . 40 »
Զուռնա Տմբլա III գիրք. . . 40 »
Վաղի մշակութիւնը (գիւղատնտեսական գրադարան) . . . 1 ր.
Լոյս է տեսել «Գուտտէնբէրգ» գրախանութի հայերէն, ռուսերէն և թատրոնական գրքերի գրացուցակները առանձին-առանձին. ցանկացողներին ուղարկվում է ձրի։ Դիմել՝ Тифлисъ: Книжный магазинъ „Гуттенберъ.“
1—3

Իմ աշխատութեամբ լոյս են տեսել հետևեալ
ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
Աշակերտաց համար
1. Դասատետր կրօնի ա. տարի . — 25
2. » » բ. » . — 20
3. » » գ. » . — 30
4. Հին-ուխտ դ. » . — 35
5. Նոր-ուխտ ե. » . — 40
6. Գործք առաքելոց զ. » . — 40
Ուսուցչաց համար
7. Ուղեցոյց կրօնի—հին-ուխտի (սպառ.)— —
8. » » —Նոր-ուխտի . 2—50
9. Ուսումն քրիստոնէական կրօնի Դ. հ. 1—50
10. » » » Ե. » — 50
Ինձ դիմողները ստանում են 1) 6 տարիների համար 25%. 2, 3, 4, 5 տարիների համար 20%, իսկ 7, 8, 9, 10 տարիների համար 35% զեղչ։
Կարելի է դիմել—1) ինձ (коммерческое училище), 2) Центральная книжная торговля և 3) Книжный магазинъ «Гуттенбергъ».
Սահակ քահ. Սահակեանց
84—100

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախընթաց տարիների նման մայիսի 10-ից կընդունէ հիւանդներին Կովկասի հանքային ջրերում, Պեատիգորսկում, Ելիզավետինսկի փողոցում (ռուսաց Սօրօրի դիմաց) տ. Արխիպովի։
մ. 16,18,21,23,25,27,29,30, յ. 2,4,6,13 3—12

Բժշկ. Բ. Նաւասարդեան
որ գտնվում է ՐՕՍՏՕՎ քաղաքում
Հիւանդներին ընդունում է 11—1 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ո. կ. ե. հ.) 14—100

Ն. Տէր-Ղեւոնդեանի աշխատասիրութիւնները
1. Մայրենի լեզու, չորրորդ տարի, 11-դ տիպ. գինն է 55 կ.
2. Մայրենի լեզու, երրորդ տարի, 14-դ տիպ. գինն է 50 կ.
3. Մայրենի լեզու, երկրորդ տարի, 19-դ տիպ. գինը 40 կ.
4. Մայրենի լեզու, առաջին տարի, 30-դ տիպ. գինը 25 կ։
Առաջին, երկրորդ և երրորդ տարիները պատշաճաւոր իշխանութեան կողմից ընդունված են։ Չորրորդ տարվայ նոր տպագրութիւնը, որ այս օրերս լոյս տեսաւ, ներկայացրած է Կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուի բարեհայեցողութեանը։
5. Հայրդի՝ Սրբազան պատմութիւն Հին ուխտի, գինը 50 կ.
6. » Սրբազան պատմութիւն Նոր ուխտի, գինը 50 կ.
7. Մայրենի լեզուի քերականութեան տարերքը, գինը 50 կ.
Պահեստը բացառապէս Կենտրոնական Գրավաճառանոցում։ Գումարով գնողները 20% զիջում ունեն։
(ո.) 1—5

Կիրակի, մայիսի 23-ին, առաւօտեան 11 ժամին Թիֆլիսի Արտիստական ընկերութեան Թատրոնի դահլիճում կը կայանայ
Հայոց Դրամատիկական ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողով
Հրատարակման առարկաները.
1) Պատուաւոր և իսկական անդամների ընտրութիւն։
2) Նախահաշիւ առաջիկայ թատրոնական սեզոնի։
Ծան. ա. Պատուաւոր անդամների ընտրութեան համար անհրաժեշտ է ընկերութեան բոլոր անդամների ⅔ մասի ներկայութիւնը։
Ծան. բ. Եթէ մայիսի 23-ին ժողովը չը կայանայ՝ բաւականաթիւ անդամներ չը հաւաքվելու պատճառով, ժողովը կը յետաձգվի հետևեալ կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան 11 ժամին, երբ նա կայացած կը համարվի՝ որքան անդամ էլ ներկայ լինեն։ հ. ո. կ. 2—3

Ա Զ Դ
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ-ի առաջին հարիւրթերթեան հատորն քիչ ժամանակի մէջ սպառելով, հարկաղրուեցանք բազմաթիւ նոր բաժանորդներու խնդրանաց գոհացումն տալու նպատակաւ, կրկին տպագրել սպառած մասը, որով և երկրորդ հատորի տպագրութիւնն դանդաղեցաւ։ Առաջին հատորի ներկայ յիսունթերթեան Ա. գիրքը հրապարակ հանած ժամանակ, կը փութանք յայտնելու, թէ Բ գիրքն ալ անպատճառ կ'աւարտի տարւոյս մէջ։ Բառարանիս երկրորդ հատորի տպագրութիւնն սկսած ենք շարունակել և 4—5 ամիսէն լոյս պիտի տեսնէ առաջին յիսունթերթեան գիրքը, գեղեցիկ տպագրութեամբ և բազմաթիւ նոր ու հետաքրքրական զուտ ազգային պատկերներով զարդարուած։
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ-ը պիտի ձևանայ երեք հատորներէ. իւրաքանչիւր հատորի բաժնեգինն է զուտ 15 ֆրանկ—6 rուբլի—3 տալար։
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ-ի բաժանորդ կը համարուին միայն անոնք, որ ժամանակին ուղղակի և կամ մեր գործակալներու միջոցով մեզ կը հասցընեն բաժնեգնները։ Մեր գործակալները, իւրաքանչիւր 10 օրինակի վրայ մէկ օրինակ նուէր կ'ընդունին։
Դիմել մեր հետևեալ հասցէին։
Imprimerie Arménienne
St. LAZARE VENISE (Italie)
ԿԸ ԽՆԴՐՈՒԻ
ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ-ի համար նշանաւոր քաղաքներու, գիւղերու, վանքերու, եկեղեցիներու, հնութիւններու, տեղական հայ տարազներու և ազգային սրտագրաւ ու սքանչելի տեսարանաց լուսանկարներ, ետ դարձընելու և կամ ի հարկին գնելու պայմանաւ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ընկերութեան ԳՐԱՄՄՕՖՕՆ Ռուսաստանում
Թիֆլիս, Գօլովինսկի պրոսպէկտ, Արիանցի տուն № 7.
Հասցէն հեռագրով Թիֆլիս
ԳՐԱՄՄՕԿՕՄՊԱՆԻԱ
Հեռախօս № 69.
ՇԱՏ ՏԵՍԱԿ՝ ամենակատարելագործված սալոնական և կօնցերտային գրամմօֆոններ։

Մեծ քանակութեամբ՝ անշշուկ պլաստինկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս են.—ռուսաց, վրաց, հայոց, թրական, պարսկական, տաճկական, լեհական, ֆրանսիական, անգլիական, իտալական, գերմանական և ուրիշները։
ՊԱՍՏԻՆԿԱՆԵՐԸ ԸՆՏՐԵԼԻՍ խնդրում ենք ուշադրութիւն դարձնէք մեր ֆաբրիկայի դրօշմին «ԴՐՕՂ ՀՐԵՇՏԱԿ» առանց մեր դրօշմի ընդունել՝ ինչպէս կեղծված։
Պահեստում կայ արհեստանոց, որտեղ հարկաւոր եղած ժամանակ կարելի է նորոգել փչացած ապարատները։ Գրամաֆօնի ուղիղ բանելու համար տրվում է երաշխաւորական թերթ 3 տարի ժամանակով։
Ուղարկելիք ապրանքների արկղը և այլ ծախսը գնողների հաշուին։
ՈՒՂԱՐԿԵԼԸ ապրանքների երկաթուղու բոլոր կայարանները, եւրօպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կատարվում է պահեստի հաշուին։
Պօստով ուղարկած ապրանքների ծախսը, պահեստը ընդունում է իրան հաշուին կէսը։
Ածած պլաստինկաները միայն մեր բաց թողած դրօշմով «Դրող-հրեշտակ» յետ է ընդունվում ներքոյ յիշեալ գներով.
Փոքր սովորական » էկստրայ } հատը — 50 կօպ.
Մեծ սովորական » էկստրայ } հատը 1 ռ. 00 կօպ.
Գիւղական սովորական » էկստրայ } հատը 1 ռ. 30 կօպ.
Տամանիս » 1 » — »
Կիրակի օրերը խանութը փակ է. հասարակ օրերը բաց 8½ առաւ. մինչև ժամի 9-ը երեկոյեան։
Պահանջեցէք պատկերազարդ պրէյսկուրանտները։
Գումարով գնողներին ուղարկվում է Օպէօվի պրէյսկուրանտները պահանջելուն պէս։—Պահանջեցէք լիակատար լիբրետտօ գրամմօֆոնի համար, գինը 1 ր. 50 կ.։ 36—50

Дозволено Цензурою. Тифлисъ, 20-го мая 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянца, Мих. пр. № 81